Պատրիկի ձանձրալի օրը

Պատրիկի ավագ եղբայրները միշտ շատ զբաղված էին նրա համար:

Ռեբեկա Ջեյքման
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել ԱՄՆ-ում:

Պատրիկը հայացքը հառել էր առաստաղին, մինչ պառկած էր անկողնու վրա: Նա ձանձրանում էր: Նա արդեն կարդացել էր կենդանիների մասին իր գրքերը, ցատկել էր բատուտի վրա և հեծանիվով շրջել էր իրենց թաղում: Ի՞նչ կարող էր նա անել այժմ:

Պատրիկը վեր կացավ և գնաց իր ավագ եղբոր՝ Դանիելի սենյակ: «Կխաղա՞ս ինձ հետ»,- Հարցրեց Պատրիկը:

«Կներես, չեմ կարող: Ես պետք է սովորեմ»,- ասաց Դանիելը: Նա նույնիսկ հայացքը չբարձրացրեց գրքից, որը կարդում էր:

Պատրիկը սրտնեղեց: Դանիելը *միշտ* սովորում էր: Մի՞թե նա չէր կարող ընդմիջել:

Դե, լավ: Դանիելը զբաղված էր, բայց Պատրիկը կարող էր հարցնել իր մյուս եղբորը՝ Սիմիոնին: «Ես ձանձրանում եմ: Կարո՞ղ ես խաղալ ինձ հետ»,- հարցրեց Պատրիկը:

«Ոչ, ոչ այսօր: Ես դուրս եմ գալիս ընկերներիս հետ»: Սիմիոնը հագավ բաճկոնը և դուրս գնաց:

Պատրիկը շատ բարկացած էր: Սիրտն արագ բաբախում էր: Պատրիկի ավագ եղբայրները *միշտ* շատ զբաղված էին նրա համար: Նա վազեց դեպի իր ննջասենյակը և շրխկացրեց դուռը:

Դա արդար չէ: Այդպես մտորում էր Պատրիկը:

Նա ոտքը գետնին խփեց և ընկավ մահճակալին: Նա շատ էր սրտնեղել: Շատ ձանձրալի էր: Զայրույթը թույլ չէր տալիս նրան մտածել, թե ուրիշ ինչով կարող էր զբաղվել:

Այնուհետև նա հիշեց մի բան, որ սովորել էր դպրոցում: Ուսուցիչը սովորեցրել էր, որ խոր շունչ քաշելը կարող է օգնել նրանց հանգիստ զգալ:

«Դժվար է ինչ-որ բան շտկելը, երբ դուք զայրացած եք»,- ասել է նա: Հավանաբար, եթե Պատրիկը ավելի հանգիստ լիներ, նա կարող էր գտնել իր ձանձրույթից ազատվելու միջոցը:

Այսպիսով, Պատրիկը խոր շունչ քաշեց: Ապա կրկնեց ևս մեկ անգամ: Եվս մի քանի խոր շունչ և նա իրեն ավելի թեթևացած զգաց: Բայց նա դեռ չգիտեր, թե ինչ անել:

Նա նստեց և նայեց իր պատից կախված Հիսուս Քրիստոսի նկարին: Ի՞նչ կուզեր Նա, որ Պատրիկն աներ:

Պատրիկը ծնկի իջավ: «Երկնային Հայր, խնդրում եմ, օգնիր Դանիելին, երբ նա սովորում է»,- ասաց նա: «Օգնիր Սիմիոնին զվարճանալ իր ընկերների հետ: Եվ խնդրում եմ, օգնիր ինձ, որ շատ չձանձրանամ»:

Երբ նա ավարտեց իր աղոթքը, շուտով մի միտք ծագեց: Նա վազեց դեպի Դանիելի սենյակը:

«Դանիել, երբ ավարտես, կարո՞ղ ենք միասին խաղալ»:

Դանիելը բարձրացրեց աչքերը գրքից և նայեց պատի ժամացույցին: «Ես կարող եմ ընդմիջել մոտ 30 րոպեից: Մենք կարող ենք բակ գնալ: Ուզո՞ւմ ես բակ գնալ»:

«Այո»: Պատրիկը ժպտաց և վազեց դեպի իր սենյակը: Նա գտավ վագրերի մասին գիրքը, որ սիրում էր նայել: Որոշ ժամանակ կարդալուց հետո նա խաղաց խորանարդիկներով: Շուտով ժամանակն անցավ, և նա ու Դանիելը շարժվեցին դեպի իրենց տան մոտ գտնվող անտառը:

«Ի՞նչ ես ցանկանում խաղալ՝ տիեզերքի ռազմիկներ, թե՞ ջունգլիների հետախույզներ»,- հարցրեց Դանիելը:

«Ցանկացածը: Ես պարզապես ուրախ եմ, որ կարող ենք միասին ժամանակ անցկացնել: Դա շատ ավելի լավ է, քան ձանձրանալը»,- ասաց Պատրիկը:

Դանիելը քմծիծաղ տվեց: «Դե, քեզ հետ խաղալը շատ ավելի զվարճալի է, քան թեստեր պարապելը»:

Պատրիկը իրեն երջանիկ էր զգում, երբ ինքն ու Դանիելը սողում էին խոտերի միջով: Խաղաղվելն օգնեց նրան ավելի պարզ տեսնել, թե ինչպես կարող է լուծել իր խնդիրը: Եվ Երկնային Հայրն օգնեց նրան ավելի շատ նմանվել Հիսուս Քրիստոսին: Ի վերջո, նրանք շատ լավ օր անցկացրին: ●

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ԼԻՆ ՍԱՅ ՆԳՈՒՅԵՆԻ